



## Մի՛ օգտագործեք այս FDA Ցանկում ներառված արտադրանքները

8/14/20 –ին FDA-ն սպառողներին խորհուրդ տվեց չօգտագործել 46 ընկերությունների կողմից պատրաստվող 157 տեսակի արտադրանքներ: Խնդրում ենք նայել FDA-ի ցանկը ամենավերջին տեղեկությունների համար, քանի որ այն հաճախ թարմացվում է:

### Ցանկը ներառում է արտադրանքներ, որոնք կարող են՝

- Պարունակել մեթանոլ (փայտի սպիրտ) կամ 1- պրոպանոլ, որը կարող է հանգեցնել լուրջ առողջական խնդիրների, ինչպիսիք են՝ կուրությունը, նյարդերի վնասվածքը կամ անգամ մահը:
- Վարակված լինել մանրէներով:
- Չպարունակել բավարար չափով սպիրտ պատշաճ ախտահանիչ գործունեություն իրականացնելու համար:

### ձեռքերի Ախտահանիչ միջոցների Անվտանգության Վերաբերյալ խորհուրդներ

- Կուլ մի՛ տվեք ձեռքերի ախտահանիչ միջոցը
- Հեռու պահեք երեխաներից և հսկեք երեխաների կողմից դրանց օգտագործումը:
- Խուսափեք այն արտադրանքներից, որոնց պիտակի վրա նշված է <<Հաստատված է FDA-ի կողմից>>: FDA-ի կողմից հաստատված ձեռքերի ախտահանիչ միջոցներ չկան:
- Անմիջապես դիմեք բուժօգնության, եթե կուլ եք տվել ձեռքերի ախտահանիչ միջոցը կամ ձեր մաշկի վրա այս արտադրանքների շարունակական օգտագործումից ձեզ մոտ ի հայտ են եկել ախտանիշներ: Ախտանիշները ներառում են գլխացավ, աղոտ տեսանելիություն կամ կուրություն, սրտխառնոց, փսխում, որովայնի ցավ, շփոթվածություն, կորոհիւնացիայի կորուստ, զգոնության նվազում, դանդաղեցված զարկերակ և շնչառություն, մաշկի կամ աչքի գրգռվածություն:
- Խորհրդատվության համար զանգահարեք թունավորումների կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-222-1222 :



Արտադրանքների օգտագործումից խուսափելու FDA-ի ցանկը կարող եք գտնել այստեղ՝ [www.fda.gov/drugs/drug-safety-and-availability/fda-updates-hand-sanitizers-consumers-should-not-use](http://www.fda.gov/drugs/drug-safety-and-availability/fda-updates-hand-sanitizers-consumers-should-not-use)